ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 22

<<21>> հունվարի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մնացականյանի դիմումը՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքակամ կառուցված շինություններն օրինական ճանաչելու մասին **որոշում եմ՝**

1.Հաշվի առնելով, որ քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մարմաշեն բնակավայրի 42-րդ փողոցի, 7-րդ հասցեում գտնվող 08-078-0024-0010 կադաստրային ծածկագրով 0.105 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում /հիմք՝ իրավունքների պետական գրանցման վկայական N 11062015-08-0005/ 2013 և 2020 թվականներին ինքնակամ կառուցված 94.80 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 10.60 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությունները /հետագայում ինքնակամ շինություն/ բավարարում է Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> 11-րդ կետում սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2.Օրինական ճանաչված շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:

3.Նշել, որ օրինական ճանաչված շինությունները՝

ա)չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ)չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ)կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

դ)կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան:

ե)չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Ինքակամ կառույցն օրինական ճանաչելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա)բնակելի տան արտաքին մակերեսը կազմում է 94.80 քառակուսի մետր, իսկ օժանդակ շինությունների՝ 10.60 քառակուսի մետր, որպես բնակելի նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերի համաձայն, վաճառքի գինը բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ օժանդակ շինությունների՝ բազային տուրքի 6-ապատիկ չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի

17-ի N470-Ն որոշմամբ հաստատված XIV գոտում ընդգրկված Մարմաշեն բնակավայրի համար սահմանված 0.055 գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

94.80 քառակուսի մետր X 10000 ՀՀ դրամ X 0.055=52200 (հիսուներկու հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,

10.60 քառակուսի մետր X 6000 ՀՀ դրամ X 0.055 = 3500 (երեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրպետության դրամ

բ)ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է 55700 (հիսունհինգ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի բյուջե:

գ)սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Պարտավորեցնել հողամասի սեփականատեր՝ Արմեն Վոլոդյայի Մնացականյանին (անձնագիր՝ AT 0346783, տրված՝ 09.01.2020թ. 030-ի կողմից), սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

21.հունվարի.2021 թվական
Գյուղ Մայիսյան